Արձանագրություն N 3

ՀՀ քննչական կոմիտեի կողմից դյուրակիր լուսավորության կայանների (լուսարձակների) ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԴԼԿ-22/1** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

02 դեկտեմբերի 2022թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Ս. Գարանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

1. Տեղեկատվություն Ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին

1.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ 1-ին չափաբաժնի մասով Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ին** էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 24.11.2022թ.-ի ուղարկվել է թիվ **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԴԼԿ-22/1-1** ծածկագրով պայմանագրի շնորհումը՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի: Սակայն, **«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն** համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ չի ստորագրել նախագիծը /կից հավելվածներով/ և սահմանված կարգով /eauction.armeps.am համակարգի միջոցով/ չի ուղարկել պատվիրատուի ստորագրմանը: Ինչպես նաև հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները միակողմանի հաստատած հայտարարության՝ տուժանքի ձևով:

Հանձնաժողովը որոշեց.

1.2 ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

1.3 Հաստատել 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

1.4 ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն նախաձեռնել **«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ **Գագիկ Արշակյան**

անդամներ՝ _____ **Վահագն Մկրտչյան**

_____ **Սիլվա Գարանյան**

քարտուղար՝ _____ **Սիրուշ Նազարյան**